

արդի պայմաններին համապատասխան թւառի որդեգիրները ուստի սակաւաթիւն նորերին միայն ընդունել կարող է, և խիստ ընարութեամբ: Թէ նորերի և թէ վերաբնիլի աշակերտների քննութիւնները կախուեն սեպտեմբեր:

ՏԵՇԱԿԱՆ ԱՅՑ:

Ա. Երրուսաղեմի լուսարարացիւս Խապայեան Տ. Ասհակ եպիսկոպոս որ Ա. Յակոբայ մանուց մատնագրանի ձեռագիրներուն քննական ընդհանուր ցուցակը պատրաստելու ձեռնարկած էր, 3000-ի մաս զրչագիրներէն՝ 320 օրինակ ձեռագրերու ուսումնասիրութիւններն աւարտեր է: մէկ տարուան միջոցին Ար հաւաստեն թէ սայն գրական աշխատասիրութիւնը բաւական ստուարահատոր գործ մըն է: և Խապայեան Արքապանի ցարդ հրատարակութիւններին մէջ աւաջին տեղը կը զրաւ է:

—Պատրիարքական Փոխանորդ Տ. Գարբիէլ եպիսկոպոս ձեփահիրնեան՝ ընկերակցութեամբ Ա. զործակատար Տիգրան էֆ. Տ. Ներսէսեանի այցելութիւն տալով Ասմոլիկ—Խոսրիներու նորընտիր Տ. Էֆրէմ Պատրիարքին որ Պէրութէն մայրաբազրս եկած է: բարի գալուստ մաղթեց յանուն մեր Ա. Պատրիարք նոր:

— Ազնէն կը զրեն 23 թուականորդ Արքարիկի առաջն. տեղապահ Տ. Մուշեղ Ծ վարդակետ ամսոյս 11-ին քաղաքու հասաւ: իր հետ ունենալով Երարիկի քահաններէն Տ. Ապարշակ Հայրը: Յաջորդ օրն իսկ սկսաւ շուկային մէջ հանգանակութիւն կատարել: բացուելիք Արքանոցին նախապատրաստութեանց համար: Հանգանակութիւնը շարունակուեցաւ թաղէ թաղ և զիւղէ զիւղ՝ միշտ ընկերակցութեամբ Մուշեղ Հայրսուրբին: Ազնայ քաղաքէն: Շառուչելին: Կամրիապէն և Կարուչլայէն եղած հանգունակութեան արդինքը 5500 զրշ.-ի բարձրացաւ: ու քաղաքացի կիներ բարեսիրարար եկան տղու անկողինները պատրաստելու: Արքանոցը որ պիտի մատակարարուի Երմանիրաբնակ Թորոսեան պատուական եղրայրներուն ծախովի հանդիսաւորապէս բացուեցաւ մայիս 23-ին: Առաջն. անկազարհը որ Կարուչլայ կը գանուէր միշտ: առաւտուն քաղաք գարձաւ: Արքանոցի բացման հանգէսը սկսաւ ժամ 5-ին: հինգ քահաննաներու: պաշտօնական մարմններու և ժողովրդեան բազմութեան մը Ներկայութեամբ: Քողոքական որրանոցներու տեսուչ մարմնները և մատակայ զիւղերու

թաղ. Խորհուրդներն ևս ունէին իրենց ներկայաց ցուցիչները, որոնք մասնաւոր հրաւերով եկած էին պատուել Արքանոցի բացման հանգէսը: Արքանական արարողութիւններէն եաք: Տ. Մուշեղ Ծ վարդակետ իսուեցաւ հանդէսին առթիւ: Հնորհակալութիւնը յայտնեց Թորոսեան հարազատներուն հեռաւ էն կատարած այս բարեգործութեանը համար: Արդորեց ժողովուրդը նպաստել այս մարդուսիրական ձեռնարկին: օրհնեց որբերը և Պահպանի ըստ անոնց վրայ: Ի վերջը: Բինկեանի Տ. Ա. արգան քահանայ Արքանեանը խօսք առնելով՝ յանուն Արքանոցի Խամակալութեան և Ակնայ ժողովրդեան: շնորհակալութիւնը յայտնեց Տ. Մուշեղ վարդապետին: Ակնայ վիճակին վրայ իր ունեցած հոգածութեանը ու ինամբին համար:

Ակնայ Արքանոցը առ այժմ պիտի ունենայ 31 որբեր: որոնց 25-ը ներկայ էն Արքանոցի բացման տաեն: Այս որբերէն 19-ը ընդունուած են քաղաքէն: մէկը Ա. աղջէնէն: մէկը Քուշնայէն: 3-ը Կամրիկապէն: մէկը Ապուչէնէն: 2-ը Զարագ զիւղէն: 1-ը Բինկեանէն: մէկը Աստրիկէն և 2-ը Լիճէն: Արքանոցին հոգաբարձութիւնը կը կազմեն՝ Տ. Մուշեղ քահանայ Տէր Պօղոսեան: Առաքել էֆ. Սիրունեան: Աստուր էֆ. Սարբեան: Մարտիրոս էֆ. Սէմէրծեան: Մելքոն էֆ. Խասկէլեան:

— Ամերիկայի հոգեոր հոգիւ Տ. Յովսէփ եպիսկոպոս Սարաձեան Աւոմըլի ազգայիններուն մէջ հանգանակութիւնը մը ընկելով՝ 120 սոկի հաւաքած և զրկած է Պատրիարքարան: գաւառացի կարօտեալներուն ի նպաստ:

— Կոյնոպէն Արքունէն 23 սոկի զրկուած է Պատրիարքարան: գաւառացի կարօտեալներուն համար:

— Տիգրիկի Ա. Գրիգոր Լուսաւորչի վանքի նորոգութեան անհրաժեշտ պէտքը ծանուցուելով Պատրիարքարան: յայտնուած է որ եմէ անմիջական կերպով նորոգութիւնը կատարուի: 100 սոկիի գումար մը պիտի բաւէ: իսկ եմէ յետաձգուի: յառաջնակային քանի մը հարիւր սոկի անբաւական պիտի ըլլայ: Տիգրիկի կալուածոց Հոգաբարձութեան յանձնուած է ինդիրը:

— Կարպայի հայ զաղթականութեանց հոգեոր հոգիւ Տ. Գէորգ եպիսկոպոս Խմբիւթեան որ Բարիկէն Մանչէսթը դացած էր քանի մը շաբաթ առաջ: այս օրերու Լօնտոն պիտի ու կեռորի՝ այնտեղի հայ զաղթականութիւնն ալ հոգիւելու և եկեղեցական արարողութիւն կատարելու համար: Մանչէսթրունակ ազգայինները յարգալիք ընդունելութիւն մը ըրեր են այցելու: Արքապանին:

— Սըվազի Զույցերիական Արքանոցին սաները յայտնելով թէ ձեակերպութեան համար միայն շաբաթը անգամ մը եկեղեցի կը տարուին:

խնդրած են Պատրիարքարանէ որ քաղքին Ազգ Արքանոցը ընդունուին:

— Ազգ. Հիւանդանոցի հոգաբարձութիւնը յոգնիլ չի գիտեր, ոչ ալ նիւթական գժուարութիւններու առջև կասիլ բարեգործական այդ մեծ հաստատութեան բազմատեսակ պէտքերը լրացնելու համար հետզհետէ: Անոյշ ջուրի խողովակներուն զետեղումը գեռ նոր աւարտած լմնուցած՝ հաճութեամբ կիմանանք մէկ ձեռնարկիր է ապուշարանի յատուկ շենքի մը կառուցման:

Իրաւ է որ Հիւանդանոցին սնտուկը շատ նեղ է և գժուարաւ կրնայ տոկալ ասանկ բացառիկ ծափքի մը՝ բայց ապուշարանը աւելի նեղ է, և հոն դիզուած խեղթերը՝ իրենց մտաւորական կարողութեան զրկուած՝ ֆիզիգապէս ալ կը տառապին իրենց բնակութեան անյարմար ու անբաւական յարկի մը տակ: Ենթագրական հաշուով մը՝ 250 սկսվ պիտի կառուցուի առաջադրուած շինութիւնը:

— Ա. Պատրիարք Հայրը Յ յուլիս իրիկուն Ազգ. Պատրիարքարան անցուց և այս առաւօտ Մարտեկեցին մէջ հանդիսաւոր արարողութեամբ Ծայրագոյնութեան աստիճան տուաւ Կեսարիոյ առաջնորդ նորապասակ Պալեան 8. Տրդատ եպիսկոպոսին: Ն. Սրբազնութիւնը այս առթիւ քարոզ խօսելով բացարեց ծայրագոյնութեան աստիճանին նշանակութիւնը: «Քահանայութիւնը բոլորովին անջատ է: ըստ վարդապետութեան քահանան դպրի աստիճաննեն կրնայ բարձրանալ հետզհետէ եպիսկոպոսութեան: առանց վարդապետական վեղար առնելու: իսկ վարդապետութիւնը կակսի գրոց աշակերտութեան և հետզհետէ կը բարձրանայ մինչեւ Ծայրագոյնութիւն: որուն նախնիք մեծ վարդապետ անունը կու տային: Ա. յլ է քահանային պաշտօնը, այլ հոգիւինը, ինչպէս նաև այլ է վարդապետին պաշտօնը և այլ՝ մեծ վարդապետինը: Քահանան միջնորդ է Աստուծոյ և մարդուն միջև. անոյ հայր և որդի իրարու կը կապուին: Հովիւները ժողովուրդին հոգը իրենց վրայ ունին: Վարդապետը կուսուցանէ և կը պաշտօնէ Քրիստոսի մեզի ուսուցած հաւատը: իսկ Ծայրագոյն վարդապետը՝ վարդապետներ կը պատրաստէ և վարդապետներու պաշտօնին վրայ կը հսկէ: վարդապետներուն կուսուցանէ և է վարդապետներու վարդապետը: Ա. յս սկզբունքին համեմատ, Ա. Լուսաւորիչէ վերջը հաստատուեցան Քոյրանոցներ լոկ վարդապետ պատրաստելու համար: առաջին վարդապետանոցը հաստատած է Ա. Մերոպ մեծ վարդապետը որուն անունով կոչուեցաւ Մերոպական վարդապետանոց, որմէ վերջը հաստատուեցան նաև Ծիրակայ: Ազմամարայ, Ծոփաց և մանաւանդ Սիւնեաց վարդապետանոցը, որուն վարիչը եղած է 8աթեացին՝ Որունեցին հաւատարիմ ժաւատարիմ ժառանգորդը»:

Ա. Պատրիարքը խօսքը մասնաւորելով օրուան ձեռնագրութեան վիրայ, աւելցուց թէ, թէ շատերուն ատրօրինակ կը թուի եպիսկոպոս ըլլալէ վերջը, Ծայրագոյնութիւն առնելը, սակայն Եկեղեցւոյ օրինաց բնական մէկ հետեւութիւնն է, քանի որ Ծայրագոյնութիւնը բոլորովին անջատ է եպիսկոպոսութենէ. այսպէս որ Ծայրագոյնութիւն չունեցող եպիսկոպոս մը կրնայ ձեռնադրել, բայց ոչ երրէք վարդապետական գաւազանի իշխանութիւն տալ: Ա. յսպէս հջմիածնի և Խրուսալէմի շատ մը եպիսկոպոսները չունին մեծ վարդապետի աստիճանը, վասն զի մեծ վարդապետի մը հսկու դութեան ներքեւ կը գտնուին: Ա. Պատրիարք Հայրը, յարեց թէ 8. Տրդատ եպիսկոպոս որ կարեւոր վիճակի մը առաջնորդութիւն կը վարէ արգիւնաւորապէս տասը տարիներէ աւելի, պէտք է որ Ծայրագոյնութեան՝ այսինքն մեծ վարդապետի հոգեօրական աստիճան ունենայ. զի Կեսարիա ունի Ա. Կարապետի մասունքն ու մայրավանքը որ վարդապետներ պատրաստելու սահմանուած է. Կեսարիա մեզ համար կարեւոր վիճակ մըն է նաև, վասն զի Ա. Լուսաւորչի ծննդավայրն է:

Ա. Պատրիարք Հայրը օրուան տօնին վրայ ալ մէկ քանի խօսք ընելով, մաղթեց որ Լուսաւորչայ լոյս հաւատը հաստատուն մնայ հայ ժողովրդի սրախ մէջ, Խարտաւիլակի պաշտօնը կատարեց Պատրիարքական Փօխանորդ Սրբազնը:

— Ցուցիս 8 Եղմիքեանց դրական մրցանակաբաշխութեան հանդէսէն եաբք: Խառն Ժողովը գումարուեցաւ նախագահութեամբ Ա. Պատրիարք Հօօր և ատենապետութեամբ Ասեմ: Գարբիէլ էֆ. Խորատունիկեանի: ու զրազեցաւ հետեւեալ խնդիրներով: 1.—Արարկիրի Գաւառ. Բնդհ. Ժողովին կողմէ 8. Մուշեղ Ծ. Վ. առաջնորդ ընտրուած և տեղեկագրուած էր Պատրիարքարան: Ժողովը ստուգեց ընտրութեան օրինաւորութիւնը և հաստատեց զայն: և որովհետեւ 8. Մուշեղ վարդապետ իր անձնական ակարութիւնը գարմանելու համար Պոլիս գալու պէտքը յայտնած էր, որոշեց արտանել զինքը, 2.—Ժողովը տեղեկանալով որ Ակնայ նորընտիր առաջն. տեղապահ 8. Արհստակէս Ա. մեկնած և Քդիէն՝ իր նոր պաշտօնատեղին երթալու համար, որոշեց յանձնարարել Ակնայ Գաւառ. Աարշութեան պէտք եղած դիւրութիւնները ընդային անոր, 3.—Խարբերդի առաջնորդ 8. Պետրոս Ա. Բագրատունի օգնական մը ունենալու պէտքը յայտնելով առաջարկած էր Զմշկածացը միացնել Խարբերդի վիճակին և տեղուցն տեղապահ 8. Կորիւն վարդապետի գործակցութեամբ վարել ընդհանուր վիճակին գործերը, Ժողովը ինչ ինչ բանաւոր պատճառներով բանաւոր չգտաւ այս երկու վիճակներուն միացումը, սակայն հաստատեց Խարբերդի առաջնորդին բգնականի մը պէտքը և որոշեց

յառաջիկային անուանել արժանաւոր օգնական մը-
կ. — Առանցիք Բայս գաւառակի Զօք-Մէրզմէն
քահանայէն տեղական ինչ ինչ կարևոր խնդիրներու
համար թէ Պատրիարքարան և թէ Առանցիք Ա-
ռաջնորդարանին տեղեկագիրներ յղուած ըլլալով
ժողովը Նկատողութեան առնելով այդ խնդիրներուն
կարևորութիւնը: Հարկ եղած անօրինութիւնը ընե-
լէ առաջ որոշեց Առանցիք առաջնորդարանէն բա-
ցատրութիւններ և տեղեկութիւններ ստանալ:

— Զմիւռնիոյ առաջնորդ Տ. Մէլքիսէդէկ
եպօ. Մուրատեանց զրած է ի Պատրիարքարան թէ
տեղոյն ազգ՝ ստուգի պարտուց բարձման համար
50,000 զրչ-ի պիճակահանութիւն մը կազմակեր-
պած է, և կինդրէ Պատրիարքարանէն որ այս մա-
սին պետք եղած արտօնութիւնը ձեռք բերէ:

— Ի նպաստ կարօտելոց Պատրիարքարան հա-
սած են Ալիքրթէմպէրէկ 200 ֆր. և Գրէզնուէն 43
անդէ. ոսկի:

— Ներսէս Սրբազն և Վահրիճ զրդ. կաշ-
խամին Վանայ և Հրահայից մէջ, Հետզհետէ
Պատրիարքարանէն զրկուած նպաստները բաշխուե-
լով, ամէնէն աւելի կարօտեալներուն պէտքերը
գոհացուած են, և հիմակ ալ չեն երեխ առա-
ջուան մեծ բազմութիւնք որք Առաջնորդարանի
գուռն ափ առած հայ կինդրէին: Բայց քանի
որ գիտուած է թէ Առաջնորդարանին մէջ
զրամ կայ, նուազ կարօտներն ևս հան կդիմն
այժմ: Աերջերս համեմատապէս բարեկեցիկ Սպա-
կերտցի քահանաներ ու տեղացիներ ալ Առաջնոր-
դարան կդիմնեն: բայց Սրբազնն, ըստ սպորտու-
թեան քննութիւն կատարելով, կհասկնայ անոնց
անկարօտ վիճակին, և անվրէպ կմերժէ: իր ծանօթ
անաշառութեամբ: Ասոր վրայ, յիշեալ Սպակերտ-
ցիք կսպանան: բայց մտիկ ընող ըրլլար: զի իրենց
դիմոցինը Ներսէս Սրբազն մ'է որ անանկ սպառ-
նալիքներու կարևորութիւն չի տար: և ասոր վրայ:
կերթան դաւանափոխ կ'րլլան: և այն առթիւ մարդ-
գութ երկու մէջիտի բաշխում մը տեղի կունե-
նայ իրենց: Ներսէս Սրբազն բաւական բառ չի
գտներ իր գաւառային բաւարանին մէջ՝ այս շարտ-
շահ գեղացիներուն արաբըն ու մարմունքն որակե-
լու համար: և արժատական միջոցներ կառաջարէէ
վերջ տալու համար այս յոտի շրջանին:

— Ամերիկացի Հայոց Հոգևոր Հովի: Տ. Յով-
ուէփ եպիսկոպոսի. Սրբածեան Ամերիկայի վիճակը եօթը
թեմերու բաժնած և իրաքանչիրին ուրոյն մա-
տակարար հովիներ կարգած է հետեւալ կեր-
պով: —

1. Պուդը՝ կեդրոն: Սարածեան Սրբազն-
2. Գրէզնօ՝ Ահարոն Վ. Յ. Շիլակի՝ Վահրամ Ք. Տ. Մուրլեան: 4. Բրավիտէնս՝ Վաղինակ Վ. Սիսակեան:
5. Նիւ-Եօթը՝ Խոտ Վ. Մարգարեան: Տեղուցն վար-
չական մարմնոյն ընտրութեամբ Պօսթընի Հովեոր

հովին կարգուած է Մաշթոց Վ. և Լորէնսի հա-
մար ալ Պատրիարքարանէ վարդապետ մը ու զուածէ:

— Անեեաթիկի Միամիթարեան նախկին միարան
և, Պօղոս Վ. Գավթան: մէկ քանի անգամ Մ.
Պատրիարք Հօր հետ տեսակցելով յայտնած էր
թէ իր տրամադրութեան տակ զանուած դումարով
մը վարժարան մը պիտի հիմնէ: և աշակերտելու
համար 20 որբ աղաքներ ուզած էր: և, Գավթան
իր այս առաջարիկութիւնը գրաւորապէս ալ ներկա-
յացուցած ըլլալով: Կապատից Յանձնաժողովը նր-
կատողութեան առեր է զայն: և որոշեր է այս
մասին հարկ եղած կարգադրութիւնները սահմանի
այն առեն: երբ և Պօղոս Վ. իր խոստացած դրպ-
րոցը բանալով իր ծրագիրը գրծադրութեան դէ:
— Եւրոպայի այցելու հովի Տ. Գէորգ ե-
պիսկ: Եւթիւնեանի պաշտօնին նկատմամբ Խու-
մանիոյ կառայարութեան արուած սխալ տեղեկու-
թեանց մասին հարկ եղած գոհացուցիչ բացատրու-
թիւնները տրուած: և թիւրիմացութիւնները աս-
տիճան մը ուղղուած ըլլալով: Կը լսուի թէ Տ.
Գէորգ եպիսկ: ի մօտոյ Խումանիա պիտի վերադառ-
նայ:

— Սանասարեանի կտակակտաւար Պ. Կ. Եղ-
եանց 2000 սուլոյ գումար մը զրկեր է Պատրիարք-
քարան իրեւ կանխավճար տրուելու համար այն
խանին: որ պիտի զնուի իրեւ կալուած Սանասա-
րեան վարժարանի: Մինչեւ հիմա Սանասարեան
վարժարանի գրամագլուխը կը կազմէին զանազան
արժեքուղթերը բայց հիմա որոշուած է հաստա-
տուն եկամուռափ վերածել նոյն գումարը: և ասոր
համար կը զնուի Պողոս կողմը խան մը 20,000
սոկի արժողութեամբ:

— Ամերիկայէն Տ. Յովսէփ եպիսկ. 157½
սոկի: Եղիպատուէն 80 սոկի և Էտի՞ռնէէն կրկն
անգամ 12 սոկի զրկուած է Պատրիարքարան՝ ի
նպաստ կարօտելոց:

— Մշց Ս. Կարապետի վանուց նորոգութեան
համար: Խուսահայ բարերաբի մը կողմէ 1000 բուր-
լի նուիրուած ըլլալով: վանքին նորոգութիւնը
սկսեր է: և յս գումարը Պատրիարքարանի միջոցաւ
կը զրկուի:

— Պանտրմա Պալլքէսէրի առաջն: տեղա-
պահ Թաթուուլ Վ. Վ. Պուրեան դրած է Ս. Պա-
տրիարք Հօր թէ ձեռնարկած է տեղուցն վարժա-
րանի շնորթեան: որուն համար ներկայ Թաղ-
Խորհրդոյ անգամներէն մին 200 սոկի յատկացու-
ցած է: Թաթուուլ Վ. պիտի ձեռնարկէ հանգանա-
կութեան: և կը յաւսաւ թէ ի մօտոյ գլուխ կը
հանէ այս կարեւոր ձեռնարկը: Թաթուուլ Վ. ժա-
մանակ մը ևս Պանտրմա մնալէ վերջը: պիտի եր-
թայ Պալլքէսէր:

Եղիպատուց դրական մցանակարաշխուրիւմ: — Սրբոց
թարգմանչաց Սահմակայ և Մետրոպոլյա տօնին առթիւ-

յուլիս 20 առաւօս Դ.ալաթիոյ եկեղեցւոյն մէջ
յեկեղեցական հանդիսաւոր արարողութիւններ տեղի
ունեցան: որոց նախագահեց Ա. Պատրիարք Հայոց
և գեղեցիկ քարոզ մը խօսելով մեր թարգմանիչ-
ներուն կատարած մեծ զորդը բացատրեց: Փամբ
ն էր երր սկսաւ հանդէսը: նախ Մկրեան Յով-
հաննես աւագ քհ: յատուկ առողածութեամբ կար-
դաց Եղմիքրեանց Գրական Յանձնաժողովոյ տեղեկա-
գիրը:

Այդ տեղեկագրեն հասկցուեցաւ թէ Ազգ. վարչութեան վաւերացմամբ աղա Յափէփ Իզմիր- եանցի 1884 ապրիլ 13-ի կտակագրին համաձայն, 1887 տարիէն սկսեալ նոյն կտակին մնայուն յան- ձնաժողովը իր պաշտօնը կատարած էր, ամէն տարի վարձատրելով զանազան աշխատութիւններ որոնք Ներկայացուած են իրեն. տեղեկագիրը մէկ քանի տեսութիւններէ յետոյ այս տարի իրեն վեց գործ Ներկայացած ըլլալը կը յիշատակէ, և անոնց իւ- րաքանչ/ իրին վրայ թէ յանձնաժողովին և թէ քննիչներուն կարծիքները մէջ կը բերէ.

Ներկայացնալ գրքին և հետեւալները:
1.—Ազուանից երկիր և դրացիք և Երցախ երկու
հատոր: 8. Մակար եպիսկ. Քարիուղարեանցի.
Տեղեկագիրը կըսէ մէկ հեղինակը և ամիս ճամբոր-
գութիւն ըրած է Ազուանից երկիրն մէջ, ամէն
քաղաքները, աւանները և չեները պատած, պրաց-
տած: Հետազօտած և ի վեր հանած է եկեղեցական
և ազգային ամէն յիշատակներ, խաչարձաններ ու
անոնց վրայի արձանագրութիւնները քննած է ա-
ռանձական, լեզուաբանական և այլ տեսակէտներով:
Այս գործը յանձնուած է Երուսաղէմի լուսարա-
րապետ Խապայեան 8 Մահակ եպիսկ. ի քննու-
թեան որ գնահատած է աշխատութիւնը, և ինք ար-
բաւական ժամանակ այն կողմէրը պատած ըլլալով,
գոված է հեղինակին աշխատութիւնը:

2.—«Համեմատական հետազոտություն մեր
յարալեցաց» Բարելացւոց աւանդութիւններուն և
Վանայ արձանագրութեանց վրայց և «Պասակ մը
Քրիստորիի Միւլլերի գերեզմանին վրայց» 10-ական
էջեւ բաղկացեալ տեսրակիւներ, որոնք արտատպած են
Ազգայիշը Հանգեսէն։ Գործ Ա. Պատմաճեանի, տպ.
ի Վենետիկի ի վանս Ս. Դավարու։ Այս գործ ան-
բաւական նկատուելով քննութեան իսկ չէ յան-
ձնուած։

3.—Հայերէն ուսումնասիրութիւններու ձեռագիր Պ. Գրիգոր Աշանցեանի Տիգրիսէն, Այս գործը կը պարունակէ Տեղերսպուրկի, Պերլինի և Հայտէլպէրկի մէջ եղած լեզուարանական բանահոսութիւններ, որոնք կը քնննեն լեզուարանական օրենքներ, կանոններ և հայ լեզուի հանդամանքները, Այս գործը յանձնուած է Հ. Գարբիկէ Ա. Մէնէլիշեանի որ նիւթն ու նպատակը լաւ էր ըստ եւ բայց լաւ մշակուած և ուսումնասիրուած չէ, և

արգելու ինք ուսանող ըլլալով ուսանողութեան առաջին տարիներուն աշխատութիւններն են ասոնք:

Հատոր գործ։ Ա. Հատորը երկրորդէն աւելի ընդգարձակ, տպ. ի Վ. ի հնացած Տեղեկագիրը ընդարձակ կերպով խօսեցաւ այս գործին փայտ, որ կը ճանաթացնե Խզմիրի հայ գաղութին պատմութիւնը, հրանութիւնները, եկեղեցիներու արձանագրութիւնները, առաւել կամ նուազ ծանօթ անձնաւորութիւններ ու պատկերները։ Եզր. և աջնորդաբանը՝ փարչական կոսմակերպութիւնը, Հայոց և ուժեական հինգադարանը, գործին ականութեան որ օրի օտարանալը ելն։ Այս գործին քննութիւնը նախ Մամուրեան Մատթէոս Եփ. ի յանձնուած էր, բայց սա իր տկարութեան պատճառաւ հրաժարեած Գուրգէն էփ քննած է։

5.—«Հին օրեր և այն օրերուն մարզը, Պրուսացի Տերյանց Յովհաննես պատուելի» ձեռագիր Յարութիւն էֆ. Մրմրեանի. Կենսագրական այս գործին քննութիւնը՝ յանձնուած էր թէ և Ստեփան Փաշայի, սակայն իր առողջական վիճակը մէջ բերելով Հրաժարեր է: Ենայ այս գործը յանձնուեր է Աշբեկան Տ. Խորեն Սրբացանի:

6.-*Նախափորձ համառօտ պատմութեան
իմացական զարգացման Հայոց հին ժամանակներէն
մինչև մեր օրեւը 1875- ձեռագիր տոքդ. Նաղա-
րէթ էֆ Տաղաւարեանի. Այս գործին բնութիւ-
նը յանձնուեր է Պէրպէրեան Ահթեռն էֆ.-ի.*

Յանձնափողով Նկատելով որ այս տարի ամբողջ մրցանակը մէկ հոգիի չպիտի կրնայ տրուիլ, որոշած է ի քաջալերութիւն հեղինակաց այդ մրցանակը երեքի բաժաննել. այսպէս՝ Մակար եպ-ի հեղինակութեան համար 30 ոսկի, Հ. Քոսեանի 20 և Մամրեան Յարութիւն էֆ.-ի 15 ոսկի.

Տեղեկագրին ընթերցումեն յետոյ Խուսու-
ֆեան Տիգրան էվ. կտակներու վրայ հակիրք տե-
սութիւն մը ըրաւ, և ի զիմաց Խառն Ծողովոյ իր
շնորհակալութիւնը յայտնեց Յանձնաժողովի ան-
դամց։ պրոնք ամենայն խղճութեամբ կը կատա-
րեն իրենց պաշտօնու։

Ս. Պատրիքաբը խօսք առաւ և հրկար տեսութիւն մը ըրաւ կտակներու մասին՝ ընդլայնելով Նույսութեան էֆ..ի խօսքերը. Ցաւ յայտնեց թէ կտակին գործագրուելէն այսինքն. 13 տարիէ ի վեր չէ ներկայացուած գործ մը՝ որ յատկապէս մրցման Համար պատրաստուած ույլա:

Ա. Պատրիարքը ըստ թէ, երբ ներկայացուած
գործերը կտակին տրամադրութեան համաձայն չլլ-
լան՝ այն ատեն կրնանք մեր նախնեաց մատենագրու-
թիւններու աշխարհաբար թարգմանութիւնները
հրատարակել. և այդ իսկ կտակին մէկ տրամադրու-
թեան համաձայն է, ինչպէս օրինակի համար Հ.
Խորէն Ստեփանէի «Խորէնացի» թարգմանութիւնը
վարձատրուած է:

Ցեաց նորին Սրբազնութիւնը աղօթք մը կարգաց Ազա Դգմիրեանցի յիշատակին համար և հանդէսը փակեց:

Մրցանակ շահողներուն: Պատրիարքարանի կողմէ շնորհաւորական նամակները պիտի զրկուին, և այս ամթի յատկացնեալ գումարներն իրենց արամագրութեանց ներքե գրուած ըլլալը պիտի հաջորդուի:

ՊԱՐՈՒԱՀԱՅՔ.

ԹԵՇԻՔՆՁԻ ՀԱՅԱՑ ԱՐԱՄԵԼԻՆ ԵՒ Ա ԱՆՆԱ-
ՑԵԱՆ ԵՐԿԱՆՅՈ ԴՊՐՈՑՆԵՐԻ 1896/7 ԵՒ 1897/8
ԱԽՍԱԿՄԱԿԱՆ ԹԱԽԱԿԵՆՆԵՐԻ ՀԱՄԱԲ:

Արամեան և ս. Աննայիան դպրոցների տեսուչ պ. Ար Ռէքսանեանի մեզ ուղարկած տեղեկագրից ձառնական մասը զեղչելով՝ յառաջ ենք բերում հաշուական տեղեկութիւնները: Պ. Ցեառչը մի քանի խօսքով դպրոցների յառաջադիմութեան խօզընդում մի քանի հանգամնեներ յիշելով՝ որոնցից մասնանիշ է անում մանաւանդ նիւթապէս անապահով վիճակը և գաւառացի աշակերաների պակասութիւնը, յորդորում է հասարակութեան այդ կարիքները լրացնելու համար ձեռքբց եկած միջոցները գործ գնել, — անցնում է ապա հետեւալ հաշուետուութեան:

«Տարուայ սկզբում սոյն Արամեան դպրոցում կային 118 աշակերտ, իսկ ս. Աննայիան դպրոցում 73 աշակերտուհի: Նոր ընդունուեցան 21 աշակերտ և 12 աշակերտուհի: Արանցից մի աշակերտ և մի աշակերտուհի յունուարին, որով եղաւ 139 աշակերտ և 85 աշակերտուհի: Մարտուայ ընթացքում հեռացել են 14 աշակերտ: ցաւօք որտի պէտք է ասեմ: Որ վախճանուել են մի աշակերտ Գ. յառարանից և մի աշակերտուհի I. բաժանմունքից: այսպէս տարուայ վերջում ունեինք 124 աշակերտ և 84 աշակերտուհի:

Աշակերտները տեղաւորուած էին հետեւալ կարգով և այս յառաջադիմութիւնը ցցց տուին.

Արամեան դպրոց.

Ս. Աննայիան դպրոց.

Աշակերտ	Փոխականացան	Մանցիքն	Պահանջանացան	Աշակերտուհի	Փոխականացան	Մանցիքն	Պահանջանացան		
I. բաժ.	13.	8	5	—	I. բաժ.	19.	13	5	1
II. *	28.	11	17	1	II. *	21.	15	6	—
III. *	22.	11	8	3	III. *	27.	17	10	—
Ա. գաս.	23.	10	12	1	Ա. գաս.	12.	9	3	—
Բ.	29.	12	13	4	Բ.	6.	6	—	—
Գ. *	17.	10	3	4		85.	60	24	1
Դ.	6.	3	1	2					
	139.	65	59	15					

208 աշակերտեալներից փոխուել են 125, մնացել 83, ուրեմն 660/0 փոխուել է, թէև մը նացողներից 22 հոգի երկու ամիս ժամանակում գոյցի պայմանով էին փոխազրուած, բայց և այնպէս մանկավարժական խորհուրդը արմար շտեսաւ տարուայ կեսին փոփոխութիւններ անել զասարաններում:

Բոլոր աշակերտեալներից 134 թոշակաւոր էին, իսկ 74 ձրիաթոշակի, ի հաշիւ զպրոցների գիրք ու տետրակ է բաշխուել 30 չքաւոր երեխայի: Պաւառներից և այն Վ.արագաղից ու մերձակայ գիրքներից 14 աշակերտ կար, այդքան էլ Լիլաւայ թաղից էին, բայց որբերը 37 էին, վաճառականների գաւակները՝ 54:

Ընդունելութիւններն սկսուեցան օգոստոսի 26-ից, ուսումն սկսուեցաւ սեպտ. 9-ից (կանոնաւոր գասատուութիւնը սեպ. 17-ից), և քննութիւններով հանդերձ մեեց մինչ Յունիս ամսի 6. 187 դպրոցական օրեր են եղել (13 օր քննութիւն) և 98 օր արձակուրդ՝ հաշուելով կիւրակի և տօն օրերը և մարտ 20-ի խռովութեան պատճառով արձակուած 16 օրը:

Առարկաները բաշխուած էին հետեւալ ձեռով:

1. Պ. Յ. Կարապետեան ունէր 23 դաս—Հայոց լեզու և չափ. գիտութիւններ, վարում էր և տեսչի օգնականի պաշտօնը. ելել է Գ. Ճեմարանի Բ. լսարանից 1886-ին, ոռջիկն էր 270 թուման:

2. Պ. Գ. Զիլինկիրեանն ունէր 19 դաս—Գըրանսերէն և լնգչ. ու Հայոց պատմութիւն, ոռջիկն էր 260 թուման:

3. Պ. Ա. Տէր Օհանեանն ունէր 26 դ. —Հայոց լեզու և պատմութիւն, սկզբից 2 դաս աւելի վերցրեց, աւարտել է Գ. Ճեմարանը 1894-ին, ոռջիկն էր 220 թուման:

4. Պ. Ա. Վ. Վիրապեանն ունէր 25 դաս—Մուսերէն, աշխարհագրութիւն և թուարանութիւն, աւարտել է Թուարանութիւն, մարմանմարզութիւն, աւարտել է Գ. Ճեմարանը 1896-ին, ոռջիկն էր 240 թուման:

5. Ցիկ. Ա. Վիրապեանն ունէր 21 դաս (3 դաս աւելի վերցրեց)—Ճռագործ, կար ու ձեւ և թուարանութիւն, վարում էր և վերակացուի պաշտօն. Օր. դպրոցում, ա. արտել է գիմնազիա, ոռջիկն էր 210 թուման բնակարանով հանդերձ:

6. Պ. Ա. Բժշկեանն ունէր 23 դ. —Բնակ. գիտութիւն, թուարանութիւն, մարմանմարզութիւն, աւարտել է Գ. Ճեմարանը 1896-ին, ոռջիկն էր 220 թուման:

7. Պ. Ա. Յովհաննիսեանն ունէր 28 դ.—Կրօն, ձախագրութիւն, գիտող, ուսումն և երգեց, այլ և խմբագետ դպրաց, աւարտել է Գ. Ճեմարանը 1896-ին, ոռջիկն էր 220 թուման:

Մամ. 1 րումանը միջին հաշուով 1 րութիւ 90 կոպէ արժիք: